Ուրիշ արձանները նախաշշկունի եւ արշակունի շրջանէն, որոնք կրնային համեմատութեան առնուիլ, չկան, կամ գոնէ մեզի ծանօթ չեն։ Խնդրէն զուրս կը մնան բնականապէս գիր արձանք, յատկապէս նորագիւտն Անահտայ-Աբրեմայ՝ ի Սատաղ։ Համեմատութեան համար նշանակութիւն ունի ուրիշ քանդակ մը, զոր հոս համառօտիւ կ'ակնարկենք։ Դանօթ է վերոյիշեալ Տրդատայ Պարթեւի անմիջական յաջորդաց միոյն Պարնամէրայ եղերական անցքն, որ սահպուած Տրդայիանու առչեւ կը դնէր իւր թագն, յուսով առնելու անկէ այնպէս՝ ինչպէս ներոնէ առած էր իւր նախնին Տրդատ Պարթեւ. եւ սակայն յուսախաբ եղաւ. (տես նաեւ վերն՝ էջ 122։) Այս անցքը քանդակուած էր Տրդայիանու կամարին վրայ։ Ըստ Վիկոնտեսայ նոյն արքային կենդանագիրը կեցած է տակաւին Կոստանդիանու Մեծի կամարին քանդակներուն մէջ՝ առնուած Տրդայիանու կամարէն։[1]

Այս ամէնը հաբեւանցի նշանակութիւնք՝ բանասիրաց ուշադրութիւնը հրաւիրելով այս եւ նման յիշատակարանաց մանրամասն ուսումնասիրութեան մը կարեւորութեան վրայ։ Այժմ անցնինք ուրիշ կէտի մ'որ ուրիշ կողմանէ կարեւոր է, Անանունի եւ խորենացւոյ՝ Պարթեւական արքային ցանկին։

(Շարունակելի։) Հ. Ց. Տ.

ՍԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

ՈՐՈՇՈՒՄ ԵՒ ՍՐԲՈՅԱՆՑՈՑ ՀԱՄԵՄԱՏՈՒԹԵԱՆ ԱՆԿԱՌՄԸ ՀՈՌՈՍՏՈՒՆՈՒՄ

(Շարունակութիւն։)

Մանաւանդ նշանաւոր է խորենացւոյ փոխառութեան դէպքը Մաշտոցի բնաւորութիւնը նկարագրելիս։ Դրա մէջ պատմական մասից յետոյ, համաձայն կորիւնի, հետեւում է մի հատուած 15 տող, որը մենք գտնում ենք բառացի հէնց նոյն ձեւով ծանօթ ընդարձակ Վարք Ս. Սեղբեստրոսի մէջ, թարգմանած հայերէն 678 թ. Աբաս Գրիգոր Զորափորեցու ձեռքով[1]։ Վարքի 698—699 էջերում զետեղած է սեղմ, բայց գեղեցիկ մի նկարագիր Հռոմի եպիսկոպոսի հոգեւոր եւ բարոյական յատկութիւնների մասին. — "Երեսնամեայ ահա՛ այնց էր, յորժամ ի սրբոյն Մեղիսիրադէ սարկաւագութեան նախաձեռնարկեցաւ պատիւ ամենայն ապա պատուով ուրախացեալ եւ բարէվայելչացեալ քան զբոլոր վիճակաւորսն։ Զան զի ամբարտաւանութիւն եւ մարդահաճոյութիւն առ ի նորա վարս տեղի գտանել ոչ ուրեք կարացին, այլ հեզ եւ բարիակամ եւ բարեխորհուրդ գոլով եւ երկնայնոցն զարդարեալ սովորութեամբ զինքն բոլորից ցուցանէր. վասն զի զոյր տեսլեամբ հրեշտակական, բանիւ տրամապայծառացեալ, գործով սուրբ, մարմնով արտաքայլեալ, սարսիւք անմնաց, խորհրդակցութեամբ մեծ, հաւատով ուղիղ, յուսով համբերողական, սիրով անկեղծաւոր։ Այլ վասն զի զբոլորսն նորա զուղղութիւնսն ոչ եմ բաւական ասել, առ ի մասնաւորականսն նորա գործեցեալս դարձուցից զբանս։ Ս. Միքիսիրադոսի եպիսկոպոսի առ Աստուած զգնացս առնելով, ամենեքին ի միասին մեծաւ ձայնիւ վերակոչէին "Սեղբեստրոս պարտի առ պատիւ եպիսկոպոսութեան ձեռնադրել...։"

Առաւել պարզութեան համար առաջարկում եմ վերոյիշեալ հատուածի իսկական յունարէն բնագիրը։ „... Ἡ γὰρ ὑπερεφανεία καὶ ἡ ἀλαζονεία ἐν τοῖς αὐτοῦ τρόποις χώραν ἔχειν οὐδαμῶς ἠδυνήθησαν. ἀλλὰ προσηνὴς καὶ ἀγαθοθελὴς, καὶ ταπεινόφρων ὑπάρχων, οὐρανίοις ἤθεσιν κεκοσμημένον ἑαυτὸν πᾶσιν ἐπεδείκνυεν. ἦν γὰρ τῇ θέα ἀγγελοειδὴς, τῷ λόγῳ διαλάμπων, τῷ ἔργῳ ἅγιος, τῷ σώματι ἐῤῥωμένος, καὶ τοῖς ἤθεσιν ἄριστος, τῇ συμβουλίᾳ μέγιστος, τῇ πίστει ὀρθόδοξος, τῇ ἐλπίδι ὑπομονητικὸς, τῇ ἀγάπῃ ἀνυπόκριτος. Ἀλλ' ἐπειδὴ πάντα αὐτοῦ τὰ κατορθώματα, οὐχ οἵός τε εἰμι καταλέγειν, ἐπὶ τὰ μερικῶς πραχθέντα ὑπ' αὐτοῦ τρέψω τὸν δεσπότην θεὸν τὴν πορείαν ποιησάμενος ...“[2]

Ձեան նոցին նմանիք՝ յանուանեալ Զիական լերինն (Monte Cavallo) Տրդատայ տուրք համարին„ եւն։ Տես "Ազգաբաշխ, 388, եւ ծան. 2—3։

[1] Տես՝ Էմիլիան, "Պղնձէ գլուխ մը ի Հայաստան գտնուած՝„ Բ.ԶՍ՝, 1883, էջ 130—141 (Թրգմ. եւ Յեզեկեաթիւն մը սկիզբը։) Ակիլան, "Ազգաբաշխ„, 400, եւն։ Նմանատեսութիւնք տես նոյն տեղերը։

[2] Visconti, Icon. gr. II, 364 եւ pl. XVII. 1, տես Justi. 244, որ կը յիշէ Պարթամասիրի պատկերին համար նաեւ յաջորդաց՝ Oppert, ի JA. ser. IV, t. XVII, 279; Spiegel, Eran. Altertumskunde, III, 172։ Հմմտ. նաեւ Գաթրճեան, Տիեզ. Պատմ. Բ, 174՝ "Ընդանէին իակ անցք Պարթամասիրայ քանդակեցան ի կոթողի առիւ Տրդատիանու„, եւ Դանօթութեան մէջ կը նշանակէ՝ "ի կոթողի աստ որ յետոյ ասաս. ի չնութիւն կամարին Կոստանդիանոսի Մեծի, ցայսոր նշմարի Պարթամասիր մօրուքն առասպի Տրդատիանու յանդիման զրաց՝ Հաեմատաս պատմութեան Դիոնի ԿԸ. 37։ Սեբէոսեայ Ոուփոսի Ֆ.Դ։ եւ ի. Եւսեբիոսեայ Ը, 2։ տես Վիկոնտի, Պատկերագր. Ցուն. Ցուս. Գ.դ եւն։ Ակէ՝ Գարագաշեան, Բ, 258—9։

[1] Սոկրատայ Սխոլաստիկոսի Եկեղ. Պատմ. Վարք Ս. Սեղբեստրոսի յանելուածով. Վենետ. 1897։

[2] Տես քննութիւն Վարք Ս. Սեղբեստրոսի եւ խորենացու աղբիւրները Հ. Բ. Սարգիսեանի, Վենետ. 1893. այսուհետ է գտնում նաեւ Վարքի յունարէն բնագիրը։

digitised by A.R.A.R.@

Մեզ հետաքրքրող հատուածի վերջին բառերը — "ուսուցանելով անձանծրոյթ" — պակասում են "Վարք"ում. այդ բառերը փոխ է առել մեր պատմագիրը Փոքր Սոկրատից (էջ 498), ուր գործ են ածուած Ոսկեբերանի վերաբերմամբ։ Այնտեղ ուր "Վարք"ի հեղինակը անկարող լինելով թուել Սեղբեստրոսի բոլոր ձիրքերը, ստիպուած է նրա գործունեութեան նկարագրին դիմել, մեր պատմիչը դիմում է Մաշտոցի թաղման նկարագրութեանը։

Պէտք է դիտել, որ Սեղբեստրոսի Վարքից փոխ առնելու փաստը շատ մեծ կարեւորութիւն ունի "Հայոց Պատմութեան" ժամանակի որոշման համար, որը է դարու վերջից վաղ չէ կարող լինել[1]։ Այս եզրակացութիւն մենք պնդում ենք հաստատապէս, հնչելով, որ Անգլիացի հայագէտ Ֆ. Կոնիբերի[2] նոր, մեր կարծիքով, անյաջող փորձերին՝ տատանել խորենացու Հայոց Պատմութեան քննադատական եզրակացութիւնների վճռականնշանակութիւնը։

Վերջապէս եզրափակելով Մաշտոցի նկարագիրը, պէտք է մատնացոյց անել Մովսէսի մի հատուածի վրայ, այն է — "*զպարկեշտ զայն մարմին եւ նախ քան զմահն կլթեալ ի մեռելութիւն*", — որը մասամբ կազմուած է Ղազարի բառերից (էջ 104) գործադրելով "*զպարկեշտ մարմինն*" Ս. Սահակի վերաբերմամբ, մասամբ Նազիանզացու խօսքերից[3]։

Նոյն իսկ այն վէճը, որ իբր թէ ծագեց Մաշտոցի թաղման տեղի մասին, երեք կուսակցութեան բաժանումը եւ Իշխ. Վահան Մամ-

1 Այս հարցի մասին աւելի մանրամասնօրէն, տես իմ քննական յօդուածները "Հանդէս"ի 1897 թ. 10, 11 եւ 12 եւ առանձին արատապիչ օր. էջ 16 եւ հետեւ. — *Սոկրատի Նկեղ. Պատմ. եւ Վարք Ս. Սեղբեստրոսի ի լոյս ընծայելու առթիւ։ Սոկրատի հրատարակիչը Հ. Մեսրոպվ, իւր ընդարձակ յառաջաբանի մէջ ջերմ պաշտպանելով աւանդական հայեացքը խորենացու մասին Նոր քննադատների յարձակումների դէմ, ստիպուած էր "Հանդէս"ի մէջ լոյս տեսած յօդուածներից յետոյ հրատարակել իւր կարծիքներից ("Ուրարտ", 1898 թ. էջ 165–173)։ Խորենացու "Վարք Սեղբեստրոսի", հատուածից օգտուելը համարեա միաժամանակ եւ անկախ իմ յօդուածներից նկատել էր նաեւ Միքաանը "Ուրարտ", 1897 թ. էջ 422։*

2 Տես նրա յօդուածը „Byz. Zeitschr.", 1901, 3–4 տետր եւ նրա հայ թարգմանութիւնն "Հանդէս", 1902 յունուար եւ մարտ, գիտական Հ. Տաշեանի յառաջաբանով եւ մի քանի աչքի ընկնող նկատողութիւններով յօդուածի հեղինակին։ Նոյնպէս նոյն հայագէտի նամակը հրատարակուած "Հանդէս"ի նոյն տարւոյ մայիս եւ յունիս համարներում, նոյնպէս ոչ առանց առարկութիւնների նրա հայերէն թարգմանչի կողմից։

3 Տես Նորայր Քննասէր բ. էջ 61։

տունու յաղթութիւնը, նաեւ Վահան աշակերտի յիշատակութիւնը — պէտք է վերագրել մեր պատմագրի կամայական պաճուճանքներին. գոնէ ոչ կորիւն եւ ոչ Ղազար ոչ մի նման բան չեն հաղորդում։

"Յոփերք"ի Բ. հատորի մէջ զետեղած "Պատմութիւն Ս. Սահակայ եւ Մեսրովպայ", որտեղ նոյնպէս յիշւում է այդ վէճի մասին (էջ 36) — յետ ժամանակի ծագումն ունի եւ կրում է խորենացու ազդեցութեան յայտնի հետքեր։

Գ. Գրքի վերջին ԿԸ. գլուխը ամբողջ Հայոց Պատմութեան եզրափակումն է, նաեւ ամենէն ընդարձակն ամբողջ գրքում։ Հեղինակը նրա մէջ դառնագին ողբում է հայ ժողովրդի եւ Հայաստանեայց Եկեղեցու անոյշ եւ անմիխիթար վիճակը, իւր ուսուցիչների Սահակի եւ Մաշտոցի մահից յետոյ։ Որան հեղինակը կցում է հայ ժողովրդի, առանց բացառութեան, բոլոր դասակարգերի ծայրայեղ բարոյական անկման սեղմ, բայց զօրեղ եւ տպաւորիչ պատկերը, — բնութեան սովորական երեւոյթների ծայրայեղ փոփոխութիւնները ի վնաս ժողովրդի, — այլազգիների խիստ եւ չարաչար տիրապետութեան տակ ճնշուած հայ ժողովրդի տաժանելի կեանքը, միով բանիւ ժողովրդի անլուր չարիքների եւ դժբախտութիւնների պատկերը իբր պատիժ ի վերուստ։

Հաղիւ կարիք կայ ծանրանալու թէ որքան անհաւատալի է այս բոլոր չարիքների միանուագ տեղի ունենալը Հայաստանում[1]։ Մանաւանդ չափազանց է թւում հայ հասարակութեան բոլոր դասակարգերի բարոյական անկումը, առաւելապէս կուսակրօն հոգեւորականութեանը այն աստիճի չափերով, որը տեղի է ունենում յանկարծակի Սահակի եւ Մաշտոցի անմիջապէս մահից յետոյ։

Որպէս զի լաւ հասկանանք հեղինակին, պէտք է նախապէս պարզել, թէ ինչով էր նա առաջնորդւում իւր Պատմութեան վերջին գլուխը կազմելիս։ Ըստ իս Մովսէս կամենում էր, նախ՝ միանգամ եւս, եւ բոլորովին որոշակի, շեշտել, ինչոր նա առաջ ասել էր հարեւանցի, այսինքն, որ նա աշակերտ է մեծ Լուսաւորիչների՝ Սահակի եւ Մաշտոցի, միեւնոյն ժամանակ ամենից առաջաւորը. եւ երկրորդ, եւ այս մանաւանդ կարեւոր էր Մովսէսին, նա կամենում էր նոյնացնել իւր անձնաւորութիւնը համա-

1 Համմ. նաեւ Գարագաշեան. Քնն. Պատմ. Դ. էջ 67։

digitised by A.R.A.R.@

նուն "երանելի փիլիսոփոսին,, որին յիշում է Ղազար։ Ներքինս նկարագրում է "Փիլիսոփոս Մովսէսին„ թէ "արդարեւ մինչդեռ էր ի մարմնի ցանկ երկնային զօրացն էր քաղաքակից„ եւ իբրեւ հեղինակ "լուսաւորիչ եւ տգիտասիրաց գրուածքներին„, որոնց պատճառով նա ենթարկուեց հայ հոգեւորականութեան կողմից անօրատութեան եւ հալածանքների, թողնելով իր մահից առաջ "անաւոր նզովս գրով ի վերայ գլխաւորաց քահանայութեանդ ասացեալ„[1]։

Եւ այսպէս կը գլխում առաջ բերած հեղինակին ժամանակից հայ հասարակութեան հէնց այնքան խիստ մեղադրութիւնը պէտք է կազմէր այն նզովքը, որը գրաւոր թողել էր "Փիլիսոփոս Մովսէս„։ Բաց ի գրանից ինձ թւում է, որ այդպիսի գրգռուած տրամադրութիւնը հայ հասարակութեան դէմ եւ մինչեւ իսկ "Ողբի„ գաղտփարը խորհնացին պատրաստել է փարպեցու պատմութից (էջ 78) Ս. Սահակի մասին, որը խնդրում էր թոյլ տալ իրեն "ողբալ զընդհանուր կորուստ աշխարհիս Հայոց„, երբ որ նոյն իսկ հայ նախարարների գրգռմամբ եւ ջանքերով պէտք է վերջ տային իրենց գոյութեան Հայոց թագաւորութիւնն Արշակունեաց ցեղից եւ կաթողիկոսութիւնը Ս. Գրիգոր Լուսաւորչի տանից։

Ահա թէ ինչո՞ւ Գարագաշեանի ենթադրութիւնը թէ ԿԸ գլուխը (որպէս եւ ԿԱ գլխի վերջը) ներմուծումն է խորենացու պատմութեան մէջ յետոյ ուրեմն, ուրիշի ձեռքով — ես չեմ կարող հիմնաւոր ընդունել։ Մեզ հետաքրքրող գլուխը սերտ կապ ունի Հայոց Պատմութեան մնացեալ մասի, մանաւանդ Բ գրքի ՂԲ գլխի հետ, որտեղ հեղինակը նոյնպէս "ողբերգական մեղադրութիւն„ է ուղղում իր հայրենակիցներին։ Այստեղ եւս նոյն մարքեր են, նոյն ձգտումները, նոյն փայլուն ոճը եւ շարադասութեան նոյն ձեւը։ Այս բաւական չէ, այնտեղ մենք գտնում ենք նոյն աղբիւրները, որ ընդհանուր են Մովսէսի ամբողջ գրուածքին եւ սոցա թւում, հեղինակից այնքան սիրուած — Գրիգոր Նազիանզացուն (որից այնքան շատ է քաղել, ի միջի այլոց նաեւ նոյն երրորդ գրքի նախընթաց կէս եւ կէս գլուխների համար), Փիլոնին[1], որպէս եւ Անանիա Շիրակացուն եւ այլն։

Անցնելով ԿԸ գլխի աղբիւրների քննութեանը, հարկ եմ համարում նկատել, որ խորենացին իւր "Ողբի„ համար կազմապար է ընտրել "Նազիանզացու[2]„ գովասանական ճառը Անտիոքի եպիսկոպոս Մելիտոսի մահուան առթիւ։ Այն ինչոր այնտեղ ասւում է Մելիտոսի եւ Անտիոքի Եկեղեցու մասին, մեր պատմագիրը յարմարեցնում է Սահակին եւ Մաշտոցին եւ Հայոց Եկեղեցուն, իւր կողմից նոր յաւելումներով։ Առաջ եմ բերում այս ճառից այն հատուածները, որոնցից օգտուել է խորենացին։ — "...Դմա լաւագոյն էր ընդ Քրիստոսի լինել լուծանելով ի մարմնոյն. բայց մեզ չար ոլորեալ ի Հայրենի վերակացութենէն. վասն զի ահա խորհրդեան[3] ժամանակ

---

[1] Ցեսս նրա "Թուղթ առ Ղէհան Մամիկոնեան„, էջ 607—608։ — Հայոց Նորագոյն գրականութեան մէջ տարաձուռած կարծիքը, իբր թէ այն անձը, որի ոսկրները թաղուած լեռոյ յետոյ, հանեցին (արեւաները) գերեզմանից եւ ջուրը նետեցին, հէնց փիլիսոփոս Մովսէսն է — դեռ հաստատուած կարօտ է։ Պէտք է յիշել, որ Մովսէսի եւ նրա գրաւոր ան էնքի մասին, մեր մէջ բերած խոսքերից անմիջապէս յետոյ ձեռագրում երկու թերթ պակաս է կամ չորս երես in 8° իսկ յետոյ հետեւում է ընդհատած պատմութեան շարունակութիւնը մի անձի մասին, որ "ցաւագ եւ ցերեկ„ ինչպէս ասած է, "անհանգիստ այնատութեանց եւ վասակոցն ի լուսաւորութիւն աշխարհիս Հայոց„, հէնց սա էր, որի հետ այնպէս անլուր բարբարոսութեամբ վարուեցին արեւաները։ Ինչպէս առնելով Ղազարի շարադասութեան բնաւորութիւնը եւ այդտեղ մէջ բերած համաձայն գեպքերը, որպես օրինակներ՝ աւելի հաւանական է թւում, որ արեւաների պախարակելի վարմունքը վերաբերում է ոչ թէ փիլիսոփոս Մովսէսին, այլ մի ուրիշ անձի, որի մասին յիշած էր պակասած տողերում։ Թէեւ այս խնդրի վերջնական լուծումը կախուած է Ղազարի աւելի անաղարտ ձեռագրի երեւան գալուց։

[1] Ուսերդ չէ նկատել այստեղ Փիլոնի ազդեցութիւնը Նաեւ Հայոց Պատմութեան առաջին գրքի, առաջին գլխի վերայ, ձնսած Սահակ Բագրատունուն, այսինքն Խորենացու գործածած (մեր ընդգծած) ինչեռ բոյն դարձուածքները — Զանազան խաղացմունս սատանայոցն ի քեզ ընդհանրացս... յառաջ քան զմարմնոյդ զնոգւոյդ ընկալեալ ճանաչութիւն... Զի եթէ վասն Բանի մեր, որպէս ասի, պատկեր Աստուծոյ, եւ գարձեալ՝ առաքինութիւն քանականին է խոնարհանութիւն եւ քո յայտնիկ անհատ ցանկութիւն, ապա ուրեմն... բարբաք պատնեալ զկայծանն... Ի ձեռն որոյ եւ զայսորիկ զսկզբնաւորսն ասես ուրախացուցանել, գեղերիկ եւ չափաւոր մտութեամբ յայտնիկ մնալաւ են զակատաւալ. — փոխ են առած երրայեցի փիլիսոփայի գրուածքների հայերէն թարգմանութիւնից — Նախախնամութիւնն էջ 64։ եւ Լինել. Ա. 4։ 13։ 16։ 29։ Այս քաղուածքների վերայ դեռ քննադատներից ոչ ոք չէ տալ դրութիւն դարձրել։

[2] Ցեսս Վ.ինն. Մխ. Թ. 217 էջ 156 եւ հետ. "Ընդ Մելիտաոս„։ — Այս ճառը, եսկապէս ասած, պատկանում է Գրիգոր Նիւսացուն, բայց հայ ձեռագրերում այն վարուց վերագրուում է, հաւանօրէն սխալմամբ, Նազիանզացուն։ (Ցեսս Հ. Տաշեանի 8ուց. ձեռ. Վ.ինն. Մխ. Krabinger, Oratio in Meletium Monachii 1838 եւ Migne հ. 46, էջ 788—864)։

[3] Ակնարկութիւն 381 թուին կ. Պոլսում, Մակեդոնի հերձուածողական վարդապետութեան առիթ կազմած տիեզերական ժողովի մասին, որտեղ նախագահում էր Մելիտաս եւ որի ժամանակ նա վախճանուեց։

---

[1] Ցեսս նրա "Թուղթ առ Ղէհան Մամիկոնեան„, էջ 607—608։ — Հայոց Նորագոյն գրականութեան մէջ տարաձուռած կարծիքը, իբր թէ այն անձը, որի ոսկրները թաղուած լեռոյ յետոյ, հանեցին (արեւաները) գերեզմանից եւ ջուրը նետեցին, հէնց փիլիսոփոս Մովսէսն է — դեռ հաստատուած կարօտ է։ Պէտք է յիշել, որ Մովսէսի եւ նրա գրաւոր ան էնքի մասին, մեր մէջ բերած խոսքերից անմիջապէս յետոյ

եւ խորհրդակիցն լռեալ է. պատերազմ զմեզ շուրջ պաշարէ, պատերազմն հերձուածողական, եւ որ զօրավարն լինի ոչ ոք է. վանդի հիւանդութեամբ հասարակաց մարմին եկեղեցւոյ եւ զբժիշկն ոչ գտանեմք։ Ցեսանէ՞ք յորպիսի մեր իրքս կան. կամիմ եթէ որպէս կարողութիւն է պնդելով զնմ զտկարութիւնս ելանել ի վերոյ քան զծանրութիւն թշուառութեանս (եւ) արձակել ձայն արժանաւոր ախտիս, որպէս առաքինիքն այնոքիկ արարին մեծաձայն ի վերայ հօրն թշուառութեան ողբալով։ Այլ զի՞նչ կրեցից, զիարդ բռնադատեցից զլեզուս ի սպասաւորութիւն քանիս, որ օրինակ իմն իբրեւ ծանր կապանք թշուառութեամբքս է կապեալ... Ցայնժամ իբրեւ ի հարսանիս պարէաք, եւ այժմ ողորմելի ի վերայ ախտիս հառաչեմք. յայնժամ առագաստի երգք եւ այժմ ի վերայ գերեզմանի ողբք։ Քանզի յիշէք, յորժամ զՀոգեւոր հարսանիսն մեզ հաստատեցաք ընդ բարի փեսային... վասն զի բարձաւ ի մէնջ քաջ փեսայն... Ո՞ւր է պայծառ առագաստն այն Հոգւովն սրբով յամենայն ժամ ուղղեալ... ո՞ւր քաջ նաւուղղին, որ զվերինսն դիտելով ուղղէր զնաւն... Ո՞ւր է քաջդր աչացն հանդարտութիւն, ո՞ւր զուարթ շրթանցն ժպտումն... Ողորմիմ քեզ, ով եկեղեցիդ, առ քեզ է Անտիոքս քաղաքդ։ Ողորմիմ՝ քեզ յանկարծակի փոփոխմամբդ (վար. փոփոխմանդ) այդուիկ, զնմդ անզարդացաւ (վար. անզարդեցաւ) գեղեցկութիւնդ, զնմդ կողոպտեցաւ զարդն, որպէս յանկարծակի վայր անկաւ ծաղիկն, ճշմարտապէս ցամաքեցաւ խոտն... Ո՞վ թշուառական պատմութեանն այնորիկ, ո՞վ պատմէ եկեղեցւոյն զախտն, ո՞վ ասիցէ մանկանց (վար. եկեղեցւոյն մանկանց), թէ որք եղեն, ո՞ պատմեսցէ հարսինն, թէ այրի մնաց. ո՞վ չարեաց... Նահատակն է հանգէս կոչեցաւ, եւ նահատակեր յաղագս ճշմարտութեանն քրտամբք, իսկ հարսն համբերէր ողջախոհութեամբ զամուսնութիւնն պահելով։ Ժամանակ էր ի մէջ յոլով. եւ ոմն սեղեռաբար յանդգնէր[1] յանարատ յառագաստն, այլ հարսն ոչ ազատեցանայր։ Դարձեալ վերստին ճանապարհ եւ դարձեալ փախուստ, երրորդ[2] անգամ նոյնպէս, մինչեւ քայքայէր զՀերձուածողական մառախուղն Ցէր եւ Ճառագայթս խաղաղութեան ի վերայ ծագելով...

Այլ իբրեւ զի գեղեցիկ, եթէ մինչեւ յայսոսիկ պատմութիւնս։ Իբրեւ զի երանելի, եթէ յայսոսիկ դադարէր քանս։ Եւ ապա զի՞նչ յետ այնորիկ, կոչեցէք զողբացող կանայսն, Յերեմիաս ասէր. զի եւ ոչ իսկ այլազգ այտման (ես կարգում եմ այրման) սրտին զեղջանել յախտէն, բայց եթէ հառաչանօք եւ արտասուօք թեթեւացուցանել։ Ցայնժամ մխիթարէր զբաժանումն անդրէն դառնալոյն յոյս, բայց այժմ զվերջին մեզ որոշումն բաժանեցաւ. վիհ մեծ ընդ մէջ նորա եւ եկեղեցւոյն ի հասարակածին հաստեցաւ (վար. հաստատեցաւ)։ Դա ի զոգսն Աբրահամու հանգչի, եւ որ բերէ զկաթ ջրոյն, զի զովացուցցէ զվտանգելոցն զլեզու, ոչ ոք է (վար. ոչ է)։ Կորեաւ գեղեցկութիւնն այն, լռեաց ձայնն, կարկեցան շրթունքն, թռեաւ շնորհն... լուայ եւ ձայնս ոմանս Յերեմիայէ տխրականս եւ սգաւորս, որովք յամոյանալ քաղաքին Լրուսաղէմացւոց ողբայր...։

Բաց ի "Առ Մելիտոս„ ճառից Խորենացին ճարտարութեամբ օգտուել է Նոյն Նազիանզացու միւս գրութիւնների հատուածներից եւ առանձին դարձուածքներից։

Այսպէս "ի հայրն ասացեալ ճառից„ Մովսէս քաղել է հետեւեալը. "զհօտս տարակուսեալ ի վայր անկեալ տեսանեմ, որքան լի տրտմութեամբ եւ տխրանաք. ոչ ելս ի տեղւոջ դալարոյ հանգուցեալ եւ ոչ ի ջուրս հանգըստեան[2] մնալ՝ խնդրէ զգահավիժութիւնս եւ ամայութիւնս...„։

Նազիանզացու "Ցաղագս ի ձեռնադրութենէ հրաժարելոյ„ ճառից[3] — Խորենացին քաղել է հետեւեալ հատուածները. — "...բայց զի՞նչ ասիցէ ոք վասն մնափառութեան եւ կամ վասն իշխանասիրութեան զանիրաւութիւնն ի բարձունս խօսողացն... ոչ ընդդէմ Մուսիսի, այլ ճշմարտութեան զնեցելոց եւ առողջութեան վարդապետութեան հակառակ յարուցելոց, որք երրորդ մասինն անխրատութեան եւ որ զՀետ նորին երթան խրատութեան յախուռն ամենայն բանիւ գիմեն վարազական ախտիւն եւ կոխեն զգեղեցիկ մարգարիտն ճշմարտութեանն... Այլ երբեմն յայլմ

1 Ակնարկութիւն, ըստ երեւութի, Կոստանդ կայսեր մեռաքով աքսորուած Մելիտոսի տեղ՝ արիոսական եպիսկոպոս Եւզոսի Անտիոքի պատրիարք նշանակուելու մասին։

2 Ակնարկութիւն Մելիտոսի եռակի աքսորման մասին Կոստանդի, Յուլիանոսի եւ Վալենտինոսի ժամանակ։

1 Տես Հեռ. Վիեն. Մխիթ. թ. 217, էջ 126 ա։

2 Հմմտ. Նաեւ „Սաղմոսք„ Իբ, 2։

3 Տես Հեռ. Վիեն. Մխիթ. թ. 217, էջ 110 եւ հետ։

digitised by A.R.A.R.@

դանդաղելք եւ շրջելք եւ ամենայն բանիւ քակտելք եւ կոխելք յոլովս փոփոխեն վարդապետս եւ բազում գիրս, որպէս փոշի հողմովք դիւրագոյն ի բաց անկեալք եւ վաղ-ջան տաժանին ըսելոք եւ մոռք։ Ո՞վ անբանութեանս. առ ամենայն բան նմանապէս դժուարին եւ չար օրինակ ինքեանց գրեն զայն. զ(ի) ծիծաղելն զմեօք եւ զարհամարհելն իբրեւ զանհաստատնով եւ որ ինչ առողջագոյնս ունիցի, եւ զհաւատովն զանցանեն անհանճարաբար յաստղացն ի բանս...„։ "...որովք սպառազինութեամբ առ ի չարին խարդախութիւնս զինեցայց, որ Մուսէս այսմ յաղթեսցէ... որ Յեսուս յետ նորա զօրավարութեամբ աստուածային պատերազմացն հանդերձ մեք պատերազմեսցէ... ոչ եւ Յորոբովամ...„։

"Առ Ամանաս„[1] ճառից խորենացին առել է այս նախադասութիւնը "...Որ զբ յՆերեմիաս ողբասցէ զմեր խաւանկութիւնս եւ զկաւաբս, որ միայն գիտէր հաւասարեցուցանել զողբս ախտիցն„։

Կայ նաեւ մի այլ դարձուածք մեր պատմագրի մօտ — "Աշակերտք հեղգ առ ուսումն եւ փոյթ առ ի վարդապետել, որ նախ քան զտեսութիւնն աստուածաբանք„ — որի մասին Հայկազեան Բառարանը[2] նկատում է, որ դա փոխ է առած Ղազիանզացուց։

Խորենացու այս գլխաւոր աղբիւրի Ղազիանզացու մէջ, իբրեւ հիմնական նկարի մէջ հիւսուած են իբրեւ զարդարանքներ առանձին դարձուածքներ եւ հատուածներ ուրիշ հեղինակներից։

Այսպէս Փիլոնից քաղած են, վերեւում բերած (էջ 329) խորենացու դարձուածքն "ամենիմաստ արուեստիւս եւ կատարելագոյն յարմարութեամբս„, նոյնպէս "զերասանակս ի բուռն առեալ[3]„, եւ "երկրի անքերութիւնք պտղոց[4]„։

Ս. Գրքից առած են "...փայփայեցից զնոսա. որպէս փայփայէ հայր զորդի զբարւոք ծառայեալ նմա„ (Մարգ. Մաղաք. Գ, 17)։ — "Զայս գիտասջիք՝ թէ յաւուրս յետինս եկեսցին ժամանակք չարք։ Զի եղիցին մարդիկք անձնասէրք, արծաթասէրք, հպարտք, ամբարտաւանք, հպարտք, անհաւանք ծնողաց, անշնորհք, անսուրբք։ Աննուէրք, անկոթք, բանսարկուք, անժոյժք, վէսք, անբարեսէրք։ Մատնիչք, յանգգունք, ամբարհաւաճք, ցանկասէրք մանաւանդ՝ քան աստուածասէրք.. (Առ Տիմոթ. Երկր. Գլ. Գ/1—4)։ — "Ոչ զոյ խաղաղութիւն ամբարշտաց„ (Նայի գլ. ԾԷ/21)։

Դարձեալ, բնութեան անբնական փոփոխութիւնների նկարագրութեան մէջ, ես տեսնում եմ Շիրակացու ազդեցութիւնը։ Մի աստղաբաշխական գրուածքի մէջ "Յաղագս կենդանատեսակաց„ (էջ 62—63), որ թարգմանուած է, ըստ երեւութի, Պօղոս Ալէքսանդրացուց՝, Անանիան ասում է. "...Երկոտասանեքեան սոքա (կենդանատեսակք) շարժին չորիւք տարբերութեամբք՝ առ ի լինել միոյ տարեւոր ժամանակի... եւ առնեն ջերմութիւն եւ ցրտութիւն, խոնաւութիւն եւ երաշտութիւն եւ իշխեն փոփոխմանց օդոց եւ ժամանակաց, բայց եթէ աստուածային ինչ հասանէ հրաման, վասն որոյ փոփոխին տարերց բնութիւնք, թէ արգեալ յողորմութիւն կամ ի խրատ, որպէս զի լինել ի ծմեռնային ժամանակի ջերմութիւն, կամ յամարայինն ցրտութիւն, կամ ձիւնաբերութիւն եւ շնչումն սառնամանեաց, որ է արտաքոյ բնութեան ժամանակի եւ գիտելի նմա միայնոյ...„ մի այլ տեղ "Յաղագս որ ի մէջ երկնի եւ երկրի շարժմունք„ (էջ 46—47) նոյն աստղաբաշխը նկատում է. "...Այս թէ լինիցի ինչ հետեւանք վնասուց ի սաստիկ որոտալոյ, իբր թէ կարկուտք եւ հրաձգութիւնք, այս ի վրէժխընդրութիւն անզգամաց եւ ի խրատ այնոցիկ, որ զահ եւ զերկիւղ Արարչին չունին յանձինս իւրեանց։ Քանզի... անչափութիւն անձրեւաց ողողանեն, եւ երաշտութիւնք զերկիր դալարաբեր ցամաքեցուցանեն, եւ ժանտախտք, սուր, հիւանդութիւնս, մինչեւ հարկանել մարդ եւ անասուն առ հասարակ...„։

Վերջապէս, իբրեւ ԿԸ գլխի աղբիւրներից մէկը պէտք էր մատնացոյց անել եւ Ը. դարու պատմագիր Ղեւոնդի վրայ, որի գրուածքի հետ խորենացին, ամենայն հաւանութեամբ, ծանօթ էր[2]։ Պատմելով մոլեռանդ մահմեդականների խարդաւանքների մասին (Է դ. վերջը եւ Ը սկիզբը), որոնք նախանձով էին նայում, ի միջի

[1] Յեսս ձեռ. Վենետ. Մխիթ. թ. 217, էջ 110b։
[2] Յեսս Նղմն տեղը. Ասատուածաբան։
[3] Վասն Ելից. բ. 115։
[4] "Զարք Իմաստնոց„ էջ 57։

[1] Յեսս Հ. Յ. Թորոսեանի գեղեցիկ յօդուածը "Բազմավէպ„ ՌԷ 1896, մայիս։
[2] Յեսս իմ "Հայոց Վէպ„ը էջ 131, 190, 216։

digitised by A.R.A.R.@

այլոց, Ս. Գրիգորի մենաստանի բարեզարդութեան եւ հարստութեան եւ մնածում էին գարշելի միջոցներով ոչնչացնել ամբողջ միաբանութիւնը, — Ղեւոնդը յուսահատ գոչում է. "Ո՞վ ոք առանց արտասուաց բերիցէ զանհնարին աղէտսն, որ ժամանեաց նոցա. զի սուրբ եկեղեցին խրթնացեալ ի բարեզարդութենէ ըեմին եւ լռեալ ձայն աստուածային փառատրութեանն"[1]։ Մի այլ տեղ[2] նոյն հեղինակը մի այլ գոյներով է նկարագրում մեզ իր հայրենակիցների անել վիճակը անգութ արարների ծանր լծի տակ (մեռ Ը. դ. կէսերն) — որը կարելի է, թէ նոյնպէս առանց ազդեցութեան չէ մնացել "Հայոց Պատմութեան" մեզ հետաքրքրող գլխի վերջին տողերի վրայ։

(Շարունակելի)

Գ. ԽԱԼԱԹՅԱՆՑ
թարգմ. Ա. ՍԱՐԿ.

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ԲԹԻՑԿ ԴՈԿՏ. ՍՏԵՓԱՆ ՓԱՇԱ ՈՍԼԱՆԵԱՆ

(Շարունակութիւն)։

Գերագոյն Ժողովի Ատենագրութիւնն երկու ամիս միայն կը տեւէ, այսինքն՝ 1859 յունուար 2 էն մինչեւ Մարտ 6։ Այս թուականէն յետոյ գրեթէ տարի մը Գերագոյն Ժողովի Ատենագրութիւն չ'ըլլար եւ միայն 1860 փետրուարին կը վերսկսի այն։ Ատենագիրն այս անգամ փոխանակ Աշանեանի, Արարատեան Սերոմբէ անունով վարդապետ մը կ'ըլլայ. բայց հազիւ թէ ամիս մը կը շարունակուին այդ Ատենագրութիւնները, կը դադրին դարձեալ 1860 Մարտ 4ին։

Ատենագրական այս երկարատեւ ընդհատումները շատ ցաւալի են արդարեւ, մեծապէս վնասակար եղած են անոնք մեր ժամանակակից պատմութեան։ Ճիշդ այն պահուն՝ երբ Ազգային կանոնագրութիւն մը խմբագրելու համար, ամիսներէ ի վեր յաճախակի գումարումներ տեղի կ'ունենային Ազգին մէջ[3], եւ Ժողովներ, Ճանձնախումբեր, գիշերաթաց կը վաստակէին առ այն, Գերագոյն Ժողովի Ցոմարներն անոնց մասին բան մը գոնէ չէին արձանագրեր, կը մնային փակ։

Շփոթ եւ վրդովուած բան մըն ալ էր այն ատեն կ. Պոլսոյ Հայ համայնքին կեանքը, վէճեր, վիճաբանութիւններ, կռիւներ անոր առօրեայ զբաղումներն էին. Ազգ. Պատրիարքարանի գործառնութիւններն անկանոնութեան մատնուած էին. Պատրիարքն իր ազդեցութիւնը բոլորովին կորուսած, խաղալիկ էր անձնական կիրքերու, եւ հակառակ իր շուրջն ունեցած ժողովներուն, ինքն ամուլ պաշտօնավարութիւն մ'ունէր։ Օրէնքի պէտքն յոյժ զգալի էր ալ։

Ամէն ոք այն Օրէնքին դէտակն կը մնար, ամէն ոք կը փափաքէր որ Ազգ. կանոնագրութեան խմբագրիչ Ճանձնաժողովը ժամ առաջ իր գործն աւարտէր, որպէս զի օրինաւորութիւնն յարգուէր շուտով, եւ մի անգամ ընդ միշտ վերջ տրուէր անկարգ, անսանձ, քմահաճ դրութիւններու. բայց՝ արի տես, որ միւնոյն ատեն, Ս. Փրկչեան Ազգ. Հիւանդանոցն ալ իր տխուր վիճակով, որ նոր չէր արդէն, կը սկսէր ամէնուն միտքն յուզել սաստիկ, ու առիթ ըլլալ նորանոր շփոթութիւններու։

Ս. Փրկչեան Ազգ. Հաստատութեան մէջ անբարեկարգութիւնները ծայր աստիճանի հասեր էին. անտէր, անտիրական պատսպարեալները՝ ծերք եւ տղայք, արք եւ կանայք, նոգեալի զբկանքներու էին հոն ենթարկուած. գութ, արգահատանք, սէր, խիղճ, խնամք, դուրս վտարուած էին հոնկէ։ Սուրբ Փրկչի անունը կրող ազգային այդ միակ պատսպարանը՝ խնամատուն մը, դարմանատուն մը, գթութեան յարկ մը չէր, այլ՝ տխուր ցուցադրավայր մը սոսկալի թշուառութիւններու. Սկիւտարեան — Սինեանեան տանջանարան մը կամ Պրոկոստեան անատանելի կտտարան մը, ուր տարաժամ կերպով անգթաբար կեանքէ կը խլուէին շատեր, ուր շղթայապիրկ կը մահանային խելաթափ հիւանդներ. ուր որբեր, այրիներ, ծերունիներ անբժիշկ անդարման կը մեռնէին։ Այս հաստատութիւնը, իր նպատակին համաձայն չէր ընթանար, աւելցուցած էր իր մէջ մոմանոց մը, ունէր միանգամայն գպրոց մը՝ "ՀՀմարան", անունով, հեռագրանոց կար հոն[1], անառականոց-ստահականոց ալ էր, տպարան ունէր գիրք կը տպէր, անկելանոց էր, յիմարանոց էր, որբանոց էր, կղերանոց էր, հիւանդանոց էր, ուրիշ դեռ ի՞նչ էր, որով եղած էր այն շաղք մը

1 Տես Ղեւոնդի Պատերազ. հրտ. էջ 20—21։
2 Նոյն էջ 136—137։
3 "Մասիս" 8դ Տարի թիւ 413 եւ 414. Դիտեմ՝ թերթերը 1859 եւ "Մեղու" Կ.Պոլսոյ, Դ. տարի, թիւ 88, 10 Փետրուար 1860, էջ 29։

1 Պատմ. Ս. Փրկչեան Հիւանդանոցին։ Կ.Պոլիս, Տպ. 1888, էջ 115—116։

digitised by A.R.A.R.@